

կուսմները մերթ հակառակորդ դրացիներէն և մերթ աւարառու աւազակներէն. այս կրկնուած աղէտներուն և կործանումներուն հանդէպ կը դիտուի որ Հայ միաբանութիւնը դարուց ի դարս երբեք չէ ընկճուած, այլ կամքի ու հաւատքի զօրեղ ուժգնութեամբ մը դիմակալելով՝ կարողացած է շարունակ վերաշինել վանքը պահպանելով սրբավայրին վեհութիւնը: Կրնա՞նք ըսել թէ Ս. Փրկչի նահատակ վանք մը եղած է:

Դէպքերու այս համառօտութիւնը քաղեցինք Երուսաղէմի Պատմութենէն զոր հանգուցեալ Ա. Եպ. Տ. Յովհաննէսեան յօրինած է ու արբերէն պաշտօնագիրներէ, հէօճէթներէ և հրովարտականներէ թարգմանելով այս դէպքերը մանրամասն գրի առած է ժամանակագրական կարգաւ:

Վերև յիշուած գլխաւոր վերաշինութիւններէ ու նորոգութիւններէ զատ, այլ և այլ ժամանակներ մասնաւոր նորոգութիւններ կատարուած են Ս. Փրկչի վանքին մէջ. այսպէս 1734ին Գրիգոր Շղթայակիր և Յովհաննէս Կոլոտ պատրիարքները Ս. Փրկչի եկեղեցին կը նորոգեն սեղանն ու յատակը սալարկել ու խաչկալը շինել կուտան աշխատակցութեամբ միաբաններու:

1794ին Եւզոկիացի Պետրոս պատրիարքին օրով Ակնայ Չէրէզցի Մտտթէոս արեղան՝ Ս. Փրկչի տեսուչը՝ եկեղեցին անօթները կ'աւելցնէ և բոլոր եկեղեցին չիկիսպոս կը զարդարէ:

1812ին Ս. Փրկչի տեսուչ Եւզոկիացի Անտոն արեղայ՝ վանքը և անոր խուցերը նորոգել կու տայ:

Ս. Փրկչի վանքը ճոխ է խաչքարերով, տապանագիրերով և այլ յիշատակարաններով որոնց ընդօրինակութիւններն ամփոփուած են Սիոնի գերեզմանատան տապանագիրերու հետ Տ. Հ. Թ. Սաւալանի Պատմութիւն Երուսաղէմի նորատիպ գիրքին յաւելուածին մէջ (էջ 1256-1304):

